Գործ հմ. ԵԴ2/0198/02/24

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

22.01.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Պետրոսյանս, ուսումնասիրելով հայցվոր «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվոր «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2024 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով էնդոսկոպիկ համակարգի ձեռքբերման նպատակով ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/20 ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի հրավերը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են հանձնվել 17.01.2023 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/0198/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. մարտի 04-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ